RÉPUBLIQUE FRANÇAISE
Liberté
Égalité
Fraternité

INSTITUT NATIONAL DU CANCER

ՄՊՎ ԿԱՄ ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՄԱՎԻՐՈՒՍՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ

Այս պատվաստումը շատ կարևոր է՝ իմ երեխային ՄՊՎ-ների դեմ պաշտպանելու համար:

Աղջիկների ու տղաների համար՝ 11 տարին լրանալուց հետո

Այս պատվաստումը պարտադիր չէ, **սակայն այն խորհուրդ է տրվում:**



Դասակիրազարդում. ©SantéBD

Ի՞ՆՉ ԵՆ ՄՊՎ-ՆԵՐԸ

ՄՊՎ-ները մարդու վարակներ են, որոնք կոչվում են **պապիլոմավիրուս:**

ՄՊՎ-ները շատ բազմազան են:

Գոյություն ունի ՄՊՎ-ների մոտ 200 տարբեր տեսակ:



ՄՊՎ-ները շատ վարակիչ են.
դա նշանակում է, որ հեշտությամբ փոխանցվում են մի անձից մյուսին:

Այդ վարակները շատ մարդկանց մոտ են առկա:



ՄՊՎ վարակները հաճախ փոխանցվում են առաջին սեռական հարաբերությունների ժամանակ: Ապահովիչն ամբողջությամբ չի պաշտպանում ՄՊՎ վարակներից:

Շատ հաճախ մեր մարմինն ինքնուրույն ազատվում է այդ վարակներից:

Եթե դրանք չեն հեռացվում մեր մարմնից, ապա կարող են առաջացնել.

- նախաքաղցկեղային ախտահարումներ,
այսինքն՝ քաղցկեղը դեռ առկա չէ,
- քաղցկեղներ,
- անոգենիտալ գորտնուկներ:
Այդ գորտնուկներն առաջանում են հետանցքի ու սեռական օրգանների շրջանում: Գորտնուկները վտանգավոր չեն, սակայն ցավ են առաջացնում:

Նախաքաղցկեղային ախտահարումներ, քաղցկեղներ, գորտնուկներ կարող են ունենալ բոլորը՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք:



Ամեն տարի ՄՊՎ-ները Ֆրանսիայում առաջացնում են.

- 100 000 գորտնուկներ
- 6 400 քաղցկեղի նոր դեպքեր

ՄՊՎ-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒԿԸ ԴԵՂՈՐԱՅՔ Է, ՈՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է: ԱՅՆ ԱՊԱՀՈՎ Է:



ՄՊՎ-ների դեմ պատվաստուկը ձեր երեխային պաշտպանում է.

- հետևյալ նախաքաղցկեղային ախտահարումների/կամ քաղցկեղների դեմ.
  - արգանդի վզիկ,
  - բունոց,
  - հեշտոց,
  - հետանցք,
- անոգենիտալ գորտնուկների դեմ:



ՄՊՎ-ների դեմ պատվաստուկը արդյունավետ է ու անվնաս:
100 000-ից ավելի երեխաներ արդեն պատվաստվել են ամբողջ աշխարհում:

Ո՞Ր ՏԱՐԻՔՈՒՄ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ



Խորհուրդ է տրվում պատվաստել աղջիկներին ու տղաներին՝ 11 տարեկանից սկսած մինչև 14 տարեկանը

Որքան շուտ պատվաստվի ձեր երեխան, այնքան պատվաստուկն իրեն առավել կպաշտպանի հիվանդություններից:

Պատվաստուկի 2 դեղաչափ է անհրաժեշտ պաշտպանված լինելու համար:

Մի՛ մոռացեք երկրորդ ներարկումը՝ 5-ից 13 ամիս հետո:



Ձեր երեխան կարող է միաժամանակ ստանալ

- ՄՊՎ-ների դեմ պատվաստուկի մեկ դեղաչափ,
- մեկ այլ պատվաստուկ, օրինակ՝ կրկնակի dTcaP (ԱԿԴՓ)

պատվաստում: dTcaP (ԱԿԴՓ) կրկնապատվաստումը նախատեսվում է 11-ից 13 տարեկան հասակում: dTcaP (ԱԿԴՓ) -ը պատվաստուկ է դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի, պոլիոմիելիտի դեմ:

ԵՍ ՄՈՌԱՑԵ՞Լ ԵՄ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ



15 տ. ⟶ 19 տ.

Պատվաստումը հնարավոր է նաև 15-ից 19 տարեկան հասակում.

Պատվաստուկի 3 դեղաչափ է անհրաժեշտ պաշտպանված լինելու համար:

Մի՛ մոռացեք երկրորդ և երրորդ ներարկումները՝ առաջին ներարկումից 2 ամիս, հետո՝ 6 ամիս անց:



Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՎԱՍՏԵԼ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ

Բժիշկը

Դեղագործը

Մանկաբարձը

Բուժակը

Դուք կարող եք գնալ նաև պատվաստման կենտրոն:

ՈՐՔԱ՞Ն ԱՐԺԵ ԴԱ

Ձեր բժշկական ապահովագրության դրամարկղը հատուցում է պատվաստուկի ամեն դեղաչափի արժեքի 65%-ը:

Օրինակ, 100 €-ից բժշկական ապահովագրությունը ձեզ հատուցում է 65 €: Մնացած գումարը կարող է հատուցել փոխադարձ ապահովագրական ընկերությունը:



Պատվաստումն անվճար է.

- քոլեջում 5 Րդ դասարանի աշակերտների համար,
- ձեր քաղաքի կամ դեպարտամենտի պատվաստման որոշ կենտրոններում,
- եթե դուք ունեք Համերաշխության լրացուցիչ բժշկական ապահովագրություն կամ պետական բժշկական օգնության ապահովագրություն

ՁԵՐ ԵՐԵԽԱՆ ՍՈՎՈՐՈՒՄ Է ՔՈԼԵՋՈՒՄ, 5ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Ձեր թույլտվությամբ՝ քոլեջում ձեր երեխային կարող են պատվաստել.

- բժիշկը,
- դեղագործը,
- Մանկաբարձը,
- բուժակը:

Ձեր երեխան կպատվաստվի 2 անգամ:
Նա պետք է ունենա իր բժշկական քարտը:
Պատվաստումն անվճար է:

Եթե ձեր երեխան արդեն ստացել է պատվաստուկի առաջին ներարկումը, ապա երկրորդը կարող է ստանալ քոլեջում:

2023 թ. 12 տարեկան 400 000 երիտասարդներ պատվաստվել են:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այդ մասին խոսացե՛ք ձեր բժշկի հետ
կամ այցելե՛ք e-cancer.fr կայքը

ԱՅԴ ՄԱՍԻՆ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԽՈՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այցելե՛ք մեր հատուկ կայքը
preventionenfant.e-cancer.fr

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ծանոթացե՛ք
առողջապահության հատուկ
կոմիքսին (SantéBD), որը
անվճար է ու հասանելի
www.santebd.org կայքում

Պատկերազարդում. ©SantéBD (առողջապահության կոմիքս)

FALC Բուկլետ
Հեշտությամբ ընթերցելու և սովորելու
համար, ընթերցել են մտավոր
անբավարարվածություն ունեցող
անձիք, ESAT l'Envol (Unapei 34)

© Եվրոպական լոգո, Հեշտ ընթերցելու համար.: Ներառում Եվրոպա. Լրացուցիչ տեղեկությունները՝ www.easy-to-read.eu. կայքում

INCa - SIREN : 187 512 777 - Հունիս 2024 - DEPVACCHPVFALC24.